ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 14** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից որեւէ մեկի կողմից հատուկ տնտեսական միջոցների միակողմանիորեն կիրառման դեպքում անդամ պետությունների փոխգործակցության մեխանիզմի մշակման հարցերով բարձր մակարդակի աշխատանքային խումբ ձեւավորելու մասին

1. Ձեւավորել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից որեւէ մեկի կողմից հատուկ տնտեսական միջոցների միակողմանիորեն կիրառման դեպքում անդամ պետությունների փոխգործակցության մեխանիզմի մշակման հարցերով բարձր մակարդակի աշխատանքային խումբ (այսուհետ համապատասխանաբար՝ Աշխատանքային խումբ, Միություն)։

2. Միության անդամ պետություններին (այսուհետ՝ անդամ պետություններ) եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ երկշաբաթյա ժամկետում ձեւավորել եւ հաստատել բարձր

մակարդակի Աշխատանքային խմբի կազմը (ճյուղային նախարարությունների եւ գերատեսչությունների ղեկավարների տեղակալների, փորձագետների մակարդակով)՝ Հանձնաժողովի՝ մաքսային համագործակցության հարցերով Կոլեգիայի անդամի (Նախարարի) ղեկավարությամբ։

3. Աշխատանքային խմբին՝ մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը Հանձնաժողովի խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ անդամ պետություններից որեւէ մեկի կողմից հատուկ տնտեսական միջոցների միակողմանիորեն կիրառման դեպքում անդամ պետությունների լիազորված մարմինների փոխգործակցության համապատասխան մեխանիզմ պարունակող եւ այլ անդամ պետությունների տնտեսությունների համար ռիսկերի նվազեցում ապահովող որոշման նախագիծը։

4. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**